ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՒՆԸ XIV—XV ԴԴ.

ԳԵՂԱՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Զաքարյանների ինքնավար իշխանության տարածքում XIII դ. ձևավորվեց Օրբելյանների ավատական տունը։ Հայաստանում ավատական այս տան հիմնադիրը եղավ Էլիկումի որդի Լիպարիտը։ 1178 թ. վրաց Գեորգի III թագավորի դեմ ամիրսպասալար Իվանե Օրբելյանի գլխավորած ապստամբության ճնշումից հետո Իվանեի եղբայր Լիպարիտն իր որդիներ Էլիկումի և Իվանեի հետ փախավ Պարսկաստան։ Հոր մահից հետո Էլիկումը Մուհամմեդ Փահլավանից կալվածքներ ստացավ Նախճավանի կողմերում և ամուսնացավ Աբաս Ճահկիցու դստեր հետ, որը Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսի քրոջ աղջիկն էր[1]։ Էլիկումի որդի Լիպարիտը, հոր մահից հետո, Ստեփանոսի աջակցությամբ և վրաց թագավորի միջնորդությամբ, Իվանե աթաբեկից կալվածքներ ստացավ Վայոց ձորում, Գեղարքունիքում, Կոտայքում և Կայենում[2]։ Նա ամուսնացել էր սյունյաց իշխանաց իշխան Բուրակի դստեր Ասփայի հետ։ XIII դ. Արշալույսին Վայոց ձորում հաստատված Օրբելյանները աստիճանաբար հզորացան և դարձան Հայաստանի ազդեցիկ ավատական տներից մեկը։ Օրբելյանների իշխանական տան պատմության ուսումնասիրությամբ զբաղվել են հայագիտության երախտավորներ Ղ. Ալիշանը, Գ. Հովսեփյանը և այլք[3]։ Օրբելյանների ֆեոդալական տան պատմության ուսումնասիրման ու ամբողջականացման հարցում ակնառու վաստակ ունի հայագիտության անխոնջ մշակ Լ. Խաչիկյանը[4]։ Վերջերս լույս տեսավ նաև Գ. Գրիգորյանի աշխատությունը՝ նվիրված Օրբելյանների շրջանի Սյունիքի պատմությանը[5]։

XIV—XV դդ. Օրբելյանների իշխանական տունը կառավարում էին 1300 թ. մահացած[6] Էլիկումի որդի իշխանաց իշխան Բուրթելը (1300/1302—1348) և նրա ժառանգները։ Պատմագիտական գրականության մեջ այն կարծիքն է հայտնվել, թե Բուրթելը Սյունիքում ու նրա սահմաններից դուրս հիշատակվում է 1306—1344 թթ.[7], մինչդեռ նրա մասին առաջին հիշատակությանը հանդիպում ենք 1302 թ. գրված մի հիշատակարանում, ուր Գրիգոր դրիչը հայտնում է, որ այն գրել է Ստեփանոս մետրոպոլիտի և Բուրթելի խնդրանքով[8]։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ 1300 թ. Էլիկումի մահից հետո նրա որդի Բուրթելը դարձավ այս ավատական տան իշխանաց իշխան։ Բուրթելն Օրբելյանների հզոր ներկայացուցիչներից էր և մեծ

---

1 «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Տփղիս, 1910, էջ 393—397։

2 Նույն տեղում, էջ 397։

3 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 92—97, Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մասն առաջին, էջմիածին, 1928, Նույնի՝ Потомство тарсаича Орбеляна и Мина Хатуна («Христианский Восток», т. II, 1913).

4 Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը («Բանբեր Մատենադարանի», № 9, Երևան, 1969, էջ 173—199)։

5 Գ. Մ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981։

6 «Դիվան հայ վիմագրության», պրակ III (այսուհետև՝ «Դիվան», III), կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 237։

7 Լևոն Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 174, Գ. Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 101։

8 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (այսուհետև՝ ԺԴ), կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 9։

շուրջ կառավարեց շուրջ 47 տարի։ Նրա մեծ հեղինակության մասին են վկայում այն տիտղոսները, որոնք նա ստացել էր ժամանակակիցների կողմից («մեծ ամիր», «կոմս և կողմնակալ», «մեծիմաստ պարոն», «հաղթող սպարապետ», «Հայոց մեծ սպարապետ», «մեծ սպարապետ Հայոց և վրաց»)[9]։ Այս բարձր հեղինակության և ազդեցության հետևանքով է, որ Բուրթելի մահից հետո Օրբելյանների տան հիշյալ ճյուղը սկզբնաղբյուրներում կոչվում է նաև «տունն Բուրթելեանց»։ Բուրթելի մասին հաջորդ տեղեկությունը հաղորդում է Մարգիս Գրիչը՝ 1306 թ. եղեգիսում գրած հիշատակարանում, ուր Բուրթելը տիտղոսավորված է նահանգի իշխանաց իշխան տիտղոսով։ Այստեղ հիշատակվում է նաև նրա եղբայրը՝ Բուղդան[10]։ Վերջինս սպանվել է 1318 թ., երիտասարդ հասակում։ Նրա տապանաքարին արձանագրված է. «Եղբաւր մեծ Բիւրթելին, զեղահրաշն Պուղտային, որ երիտասարդ հասակի յետ յոլով քաջ մրցմանց տիզախոցեալ զանխառամն ընկալաւ զպսակ թվ.։ ՉԿԷ։ (1318)»[11]։ Այս նույն թվականին Բուրթել իշխանը Բուրթիլաշեն եկեղեցում խաչքար է կանգնեցրել վաղամեռիկ եղբոր հիշատակին[12]։ 1307 թ. մի հիշատակարանում Բուրթելի մասին գրված է. «Եւ առաջի աշխարհակալացն մեծ՝ մեծարեալ՝ եւ բազում ընծայիւք պատուեալ՝ յա(ստուծո)յ յաջողել եւ ի մարդկանէ փառս եւ պատիւ ընկալեալ»[13]։ Գրիչը հաղորդում է նաև, որ Բուրթելը Ջեսարի հետ մասնակցել է Խուդաբանդա-Ուլջեյտու խանի գեպի Թալիշ կատարած արշավանքին և աչքի է ընկել քաջությամբ[14]։ Արատեսի վանքում 1310 թ. գրված ձեռագրի հիշատակարանում որպես Սյունյաց տերեր հիշատակված են Բուրթելը, Բուղդան և Ջեսարը[15], իսկ 1314 թ. Գլաձորում գրված հիշատակարանում հիշվում է մեծ ամիր Բուրթելը՝ իր եղբայր Բուղդայի հետ[16]։ Բուրթելի իշխանության ժամանակ ևս Վայոց ձորի մի մասին տիրում էին Օրբելյանները, իսկ մյուսին տիրող Պռոշյանները, հավանաբար, ընդունել էին իշխանաց իշխան Բուրթելի գերիշխանությունը։ Այսպիսի հետևության հանգելու համար կովան են ծառայել մի շարք հիշատակարանների հաղորդած տեղեկությունները։ Բերենք դրանցից մեկը, որի բովանդակությունից երևում է Պռոշյանների վասալական կախվածությունը. «Բայց գրեցաւ ի թուի հայոց ի յեթ(ն) հարիւրորդի. ութսուներորդի երրորդի (1334), ի Ձորս Վայոց, ի յանապատսիս մեծափառ Գայլիձոր կոչեցեալ... ի յիշխանութեան և տէրութեան համօրէն գաւառաց մեծ իշխանիս Բուրթելի, և որդոց նորին՝ Պէշգենի և Իւանէի, իսկ ի տեղւոյս տէրութեան՝ թոռանց մեծին Պռոշայ՝ Ամիր Հասանայ և Ջումայի»[17]։ 1321 թ. Գլաձորում գրված մի հիշատակարանում գրիչ Կորյունը. որպես գավառի զորավարներ և իշխաններ, նախ հիշատակում է Բուրթելին և ապա Պռոշյան Ամիր Հասանին[18]։ Նույն Գլաձորում 1323 թ. գրված հիշատակարանում Եսայի Նչեցին Բուրթելին կոչել է իշխանաց իշխան և «յաղթող սպարապետ»[19]։ 1328 թ., դարձյալ Գլաձորում գրված մի հիշատակարանում, նախ հիշվում են միշտ հաղթող Սիսական տան քաջ իշխան Բուրթելը, նրա զավակներ Բեշքեն և Իվանեն, ապա՝

---

9 Նույն տեղում, էջ 100, 166, 182—183, 261, 297։

10 Նույն տեղում, էջ 42։

11 «Դիվան», III, էջ 237։

12 Նույն տեղում, էջ 244։

13 «Բազմավեպ», 1947, № 9—10, էջ 216։

14 Նույն տեղում, էջ 217։

15 «ԺԴ», էջ 67։

16 Նույն տեղում, էջ 100։

17 Նույն տեղում, էջ 261։

18 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 4515, թ. 75, «ԺԴ», էջ 166։

19 «ԺԴ», էջ 182—183։

Պռոշյան Ամիր Հասանը, քաջ Վասակը, Ամիր Ասափը և մանուկ Ջուման[20]։ 1337 թ. Սյունիքում գրված մի հիշատակարանում Բուրթելը համարվում է մեծ սպարապետ հայոց և վրաց. «...ի տէրութեան աւանն Սիսակայ մեծ սպարապետին Հայոց և Վրաց թագաւորմ իշխանին Բուրթէլին...»[21]։ Սուլթանիայում 1341 թ. գրված երկու հիշատակարաններում Բուրթելը կոչվում է հյուպատոս[22]։ Վկայակոչված փաստերը հուշում են, որ Բուրթելը կապված է եղել վրաց արքունիքի հետ որպես հայոց և վրաց զորքերի սպարապետ և նրա դեսպանը՝ Զոբանյանների մայրաքաղաքում[23]։ Բուրթելն աչքի է ընկել նաև շինարարական գործունեությամբ։ Նրա միջոցներով ու հովանավորությամբ 1339 թ. կառուցվել է միջնադարյան Հայաստանի ճարտարապետական հոյակերտ կոթողներից մեկը՝ ս. Աստվածածին երկհարկանի եկեղեցին։ Բուրթելն ու իր որդիները եղել են Գլաձորի համալսարանի հովանավորները։ Եսայի Նլեցին 1323 թ. Գլաձորում գրած հիշատակարանում երախտագիտությամբ է խոսում Բուրթելի, նրա տիկնոջ՝ Վախախի և որդիների մասին[24]։ Ինչպես նշվեց, պատմագիտական գրականության մեջ Բուրթելի մասին ուսումնասիրողները վերջին տեղեկությունը համարում են 1344 թ.[25]։ Սակայն Հերհերի ս. Աստվածածին եկեղեցու 1345 թ. Դոնցա իշխանուհու թողած արձանագրության համաձայն Բուրթելը 1345 թ. կենդանի էր. «Կամաւն այ. ես Դոնցէս թոռն Հասանա դուստր պարոն Խաւսրավկա միաբանեցայ սբ ուխտիս Նորավանից, պարոնութեան իշխանաց իշխան Բուրթէլին եւ տվի գխանգահի էգին Ամատին հոդոյն... թվ.։ ՉՂԴ. (1345)»[26]։ Բուրթելի մահվան ստույգ թվականը հայտնի չէ, սակայն նա իր մահկանացուն կնքել է 1347/48 թթ., քանի որ 1348 թ. Հերմոնի վանքում գրված հիշատակարանում Սյունյաց իշխաններ են հիշվում նրա որդիները՝ Բեշքենը և Իվանեն, իսկ Բուրթելի մասին նշված է. «...որդոց բարի պաշտմամբ փոխեցելոյն առ Քրիստոս յոյսն ամենեցույն պարոն Բիւրթէլին»[27]։ Բուրթելն ունեցել է երկու որդի՝ Բեշքեն և Իվանե։ Սակայն Նորատուսի ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցու պատի 1344 թ. արձանագրության սխալ վերծանումը Մ. Սմբատյանցի կողմից, որը արձանագրության «մեղուցեալ» բառը վերծանել է Սամեղ[28], թյուրիմացության մեջ է գցել որոշ հետազոտողների, որոնք Բուրթելի վաղամեռիկ որդի են համարել նաև Սամեղին[29]։ Հետագայում վիմագրագետ Ս. Բարխուդարյանի ընթերցմամբ այդ ընթերցումը շտկվել է. «թվ.։ ՉՂԴ։ (1344)։ Շնորհիւն այ. եւ պարոնութե. իշխանին հայոց Բուրթէլին, ածատուր զաւակաց իւր Բէշքենայ եւ Ինանիկին, ես, մեղուցե[ա]լ ծառա այ Ավագս, վասն յերկար կենդանութն. պարոնաց մերոց, կամակից եղէ շինութեան վանիցս...»[30]։ Այս

20 Մատենադարան, ձեռ. № 4515, թ. 80—82։

21 «ԺԴ», էջ 297։

22 Նույն տեղում, էջ 328, 406։

23 Հենվելով հայ-վրացական քաղաքական կապերի վրա, Բուրթելը ձգտել է վերապրեցնել հայ-վրացական երբեմնի զինական համագործակցությունը և, զորավիգ ունենալով այդ միասնական ուժը, հավանաբար, մտորում էր ստեղծել անկախ թագավորություն։

24 «ԺԴ», էջ 182—183։

25 Լևոն Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 176, Գ. Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 101։

26 «Դիվան», III, էջ 223։

27 «ԺԴ», էջ 369։

28 Հենվելով հայ-վրացական քաղաքական կապերի վրա, Բուրթելը ձգտել է վերապրեցնել 1895, էջ 486։

29 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 47, Լևոն Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 176։

30 «Դիվան հայ վիմագրության», պրակ IV (այսուհետև՝ Դիվան, IV), կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 21։

փաստը և այն, որ սկզբնաղբյուրներում, առանց բացառության, Բուրթելի հետ որպես նրա որդիներ հիշատակված են միայն Բեշքենը և Իվանեն, մեզ համոզում է, որ Բուրթելն ունեցել է միայն երկու որդի։ Եթե Բուրթելը վաղամեռիկ որդի ունենար, ապա նա անպատճառ կհիշատակվեր, ինչպես հաճախ հանդիպում ենք վիմական արձանագրություններում և հիշատակարաններում[31]։ Վերը նշված 1307 թ. ձեռագրի հիշատակարանում Բուրթելի զավակների մասին կարդում ենք. «Եւ յաւետ ի խրատ եւ ի վարժումն մտաց եւ ի լուր ականջաց՝ երկուց աստուածատուր հարազատ զաւակաց իւրեանց Բէշքէնին եւ Իւանէիս»[32]։ Բուրթելի մահից հետո իշխանությունն անցավ ավագ որդուն՝ Բեշքենին։ Նա առաջին անգամ հիշատակված է հոր և եղբոր՝ Իվանեի հետ. Արենի գյուղի ս. Աստվածածին եկեղեցու 1321 թ. արձանագրության մեջ. «Ես տր. Յովհ[ա]ննէս Աւրպել Սիւնեց արհէպիսկոպոս շինող սուրբ եկեղեցոյս յիշել աղաչեմ. եւս եւ զբարեպաշտ իշխանաց իշխանն զարեան մերձաւորն իմ զքաջ մենամարտիկն զԲուրթէլն եւ զդժխոտափառ քսաստէր զոյգն իւր զՎախախն նորաբողխբոջ զաւակաքն իւրեանց Բէշքէնիւն եւ Իւանէիին։ Թվ.։ ՉՀ։ (1321)»[33]։ Սա Բեշքենի մասին մեզ հասած առաջին տեղեկությունն է, հետևապես մենք չենք բաժանում նրա մասին առաջին տեղեկությունը 1322 թ. վերադրելու կարծիքը[34]։ Գլաձորում 1323 թ. Եսայի Նչեցու գրած հիշատակարանում երկրորդ անգամ հիշատակվում են Բեշքենը և Իվանեն[35]։ Իսկ 1337 թ. գրված հիշատակարանի բովանդակությունից տեղեկանում ենք, որ Բեշքենն իր հոր հետ զինվորական ծառայության մեջ էր գտնվում մերթ Թավրիզում, մերթ Սուլթանիեում և աչքի էր ընկել քաջությամբ[36]։ 1337 թ. Սյունիքում գրած հիշատակարանում Սարգիս մետրոպոլիտը Բուրթելի հետ հիշում է նաև Բեշքենին և Իվանեին. «Գամիր քաջ զաւակաց նորին Պեշգենի և Իւանէի, որ ամենայնիւ նման գոլ հօրն բարեպաշտին»[37]։ Բեշքենը և Իվանեն հիշատակված են նաև Բուրթելաշեն եկեղեցու անթվակիր մի արձանագրության մեջ. «Կամաւն այ. ես պարոն Բիւրթէլ իշխանաց իշխան եւ ամուսին իմ Վախախ եւ որդիք իմ Բեշքեն եւ Ինանիկ շինէցաք քէկեղեցիս մեր հալալ արդեանցս»[38]։ Քանի որ եկեղեցին կառուցվել է 1339 թ., հետևապես, այս շինարարական արձանագրությունը պետք է վերագրել այդ թվականին։ Բեշքենը և Իվանեն հիշատակված են նաև 1349 թ. Թուղթանա իշխանուհու գնած Ավետարանի հիշատակարանում։ Նա հայտնում է, որ Ավետարանը գնել է «...իշխանութեան քաջ զաւրավարին Հայոց, աստուածասէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Բեշքենայ եւ Իւանէ»[39]։ Սա սկզբնաղբյուրների վերջին հիշատակությունն է Բեշքենի վերաբերյալ։ Հայրավանքի անթվակիր մի արձանագրության համաձայն Բեշքենը և Իվանեն վանքին են նվիրել «Բերդի ։Զ։ ըստակս» և մեկ ջրաղաց[40]։ Գ. Գրիգորյանը գրում է, որ Բեշքենը, հավանաբար, մա-

31 Քարի երկու կտորների վրա փորագրված անթվագիր մի արձանագրությունում, որը գտնվել է Բուրթելաշեն եկեղեցու բակում, հիշատակված է Սմբատ անունով մի պատանի. «Վարդագոյն տղին Սմբատ, որդի Բիւրթէլինն» (Դիվան, III, էջ 244)։ Կարծում ենք, որ այդ Սմբատը խնդրո առարկա Բուրթելի որդին չէ։ Հիշյալ Սմբատը ամենայն հավանականությամբ 1261 թ. հիշատակված Բուրթելի որդին է, որը, սակայն, չկա Գ. Գրիգորյանի կազմած Օրբելյանների տոհմածառում (նշվ. աշխ., 260 էջի ներդիր)։

32 «Բազմավեպ», 1947, № 9—10, էջ 217։

33 «Դիվան», III, էջ 29։

34 Լևոն Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 176։

35 «ԺԴ», էջ 182։

36 Նույն տեղում, էջ 292։

37 Նույն տեղում, էջ 297։

38 «Դիվան», III, էջ 240։

39 «ԺԴ», էջ 375։

40 «Դիվան», IV, էջ 71։

հացել է մինչև 1377 թ.[41]։ Սա անորոշ է ասված և կարելի է հասկանալ, որ Բեշքենը մահացել է 1377 թ. ոչ շատ առաջ։ Քանի որ 1367 թ. Յաղաց քարի վանքի արձանագրությունում հիշատակված է միայն Իվանեն[42], վստահ կարելի է ասել, որ 1367 թ. առաջ Բեշքենը մահացել էր, այդ պատճառով էլ արձանագրության մեջ նրա անունը չի հիշատակվել։ Իվանեն, ինչպես արդեն տեսանք, աղբյուրներում հիշատակվել է հոր և մեծ եղբոր հետ։ Նրա անվանը հանդիպում ենք մի քանի ձևով՝ Իվանե, Իվանիկ, Նանիկ և այլն։ Նրա մասին առաջին տեղեկությունը, ինչպես ասվեց, հանդիպում է 1321 թ. Արենի գյուղի արձանագրության մեջ[43]։ Յաղաց քարի վանքի 1367 թ. արձանագրության մեջ, որը թողել է ոմն Լիանոս՝ իր որդի Սամսոնի հիշատակին վանքին հողամաս նվիրելու կապակցությամբ, Իվանեն հիշվում է տեղի իշխան «Իշխանութ. Իւանէի...»[44]։ Իվանեի մասին վերջին տեղեկությունը վերաբերում է 1377 թ.։ Այս թվականին գրված մի հիշատակարանում գրիչը հայտնում է, որ հայոց իշխանությունը նվաղել էր և մնացել էր միայն Բուրթելի որդի Իվանեն, որը կոչվում էր նաև Իվանիկ[45]։ Թե մինչև երբ ապրեց Իվանեն, հայտնի չէ, սակայն պարզ է, որ Լանկ-Թամուրի դեպի Սյունիք կատարած արշավանքից առաջ նա արդեն մահացել էր։

Նախքան Բեշքեն և Իվանե իշխանների որդիներին ու թոռներին անդրադառնալը, հարկ է խոսել XIV դ. ապրած ու գործած Օրբելյան մյուս իշխանների մասին։ Սյունյաց մետրոպոլիտական աթոռին XIII դ. վերջից մինչև 1302 թ. նստած էր Տարսայիճի որդին՝ նշանավոր պատմագիր Ստեփանոս Օրբելյանը։ 1302 թ. այդ պաշտոնը ստանձնեց պատմագրի հորեղբոր թոռը՝ Լիպարիտ Օրբելյանի որդի Հովհաննես Օրբելյանը։ Դա մենք իմանում ենք 1302 թ. Հովհաննեսի գրած հիշատակարանից. «Ես տէր Յովհաննէս, յազգէ Աւրպելեանց, պռաւաթրանտէս հայոց մեծաց և մետրապալիտ Սիսական նահանգի»[46]։ Այսպիսով, ինչ-ինչ պատճառներով, թերևս ծերության կամ մեկ այլ, Ստեփանոս մետրոպոլիտի կենդանության ժամանակ մետրոպոլիտության պաշտոնն անցել էր Հովհաննեսին։ Նա երկրորդ անգամ հիշատակվում է 1306 թ.՝ Սարգիս գրիչի կողմից[47], իսկ 1310 թ. մի ձեռագրի հիշատակարանում կոչվում է Սյունյաց նահանգի վերադիտող[48]։ Գրիգոր Դոփյան իշխանը 1312 թ. Սմբատի դամբարանի հյուսիսային պատին թողած արձանագրությունում հայտնում է, որ Հովհաննեսի հայրապետության ժամանակ այգի է նվիրել վանքին[49]։ Հովհաննեսը 1321 թ. կառուցել է Արենիի ս. Աստվածածին եկեղեցին և այդ մասին թողել արձանագրություն. «Ես տր. Յով[ա]ննէս Աւրպել Սիւնեց արհէպիսկոպոս շինող սուրբ եկեղեցոյս յիշել աղաչեմ»... թվ. ՉՀ: (1321)»[50]։ 1321 և 1323 թթ. հիշատակարաններում նա հիշվում է Ստեփանոս-Տարսայիճի հետ, որպես «մետրապալիտ եւ այցելու Սիւնեաց երկոտասան գաւազանաց»[51]։ Սկզբնաղբյուրներում Հովհաննեսի վերաբերյալ 1323 թ. հիշատակությունը վերջինն է։ Հակառակ այն կարծիքի, թե չգիտենք երբ է մահացել Հովհաննեսը[52], ասենք, որ նա մահացել է 1324 թ. և թաղվել Նորա-

41 Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 105։
42 «Դիվան», III, էջ 144։
43 Նույն տեղում, էջ 29։
44 Նույն տեղում, էջ 144։
45 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 96։
46 «ԺԴ», էջ 7։
47 Նույն տեղում, էջ 42։
48 Նույն տեղում, էջ 64։
49 «Դիվան», III, էջ 239։
50 Նույն տեղում, էջ 29։
51 «ԺԴ», էջ 166, 182—183։
52 Լևոն Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 190։

վանքում Ստեփանոս Օրբելյանի կողքին։ Նրա տապանաքարին արձանագրված է. «Թվիս :ՉՀԳ: (1324) տուն իմաստից եւ հանճարոյ Աւրպէլ զՈվանէս հռչակաւոր մետրապալիտ Սունեաց»[53]։ Հովհաննեսի մահից հետո, 1324 թ., Սյունյաց մետրոպոլիտ է դարձել Ստեփանոս-Տարսայիճը։ Նա Ջալալ Օրբելյանի որդին էր (երկրորդ կնոջից), Տարսայիճի թոռը։ 1314 թ. Գլաձորում գրված մի ավետարանի հիշատակարանում նա հիշվում է որպես «դեռաբողբոջ և լուսաղարդ պատանի»[54]։ Իսկ 1321 թ. Ստեփանոս-Տարսայիճը Հովհաննեսի հետ հիշվում է որպես «վերադիտող տանս Սիւնեաց»[55]։ Նա պատանի հասակում ձեռնադրվել է արքեպիսկոպոս և կարգվել Սյունյաց արքեպիսկոպոսական աթոռի տեղապահ[56]։ Ստեփանոս-Տարսայիճը 1331 թ. հիշատակված է որպես «գլուխ արհիերից աթոռոյս Սիւնեաց Տաթևոյ և Նորավանից և Ցախացքարայ, պետ երկոտասան գաւառաց... հզաւր և իմաստուն գիտնական»[57]։ Ստեփանոս-Տարսայիճը եղեգիս ավանում կառուցել է ս. Աստվածածին եկեղեցին. «Ես տր. Ստեփանոս, որդի Ջալալին, թոռն մեծի Տարսաիճին հիմնարկել շինեցի եկեղեցիս յանուն սրբուհոյ Աստուածածնայ»[58]։ Արձանագրությունը եղծված է, չկա թվականը։ Թե մինչև երբ ապրեց ու գործեց Ստեփանոս-Տարսայիճը, դժվար է ասել։

XIV դ. երեք արձանագրություններում հիշատակված է Լիպարիտի որդի Սմբատ իշխանը։ Հերհերի ս. Աստվածածին եկեղեցում 1317 թ. Սմբատի թողած արձանագրությունից պարզվում է, որ նա 12 տարի Մսրում գերի մնալուց հետո ազատվել է և վերադարձել հայրենիք[59]։ 1339 թ. Սմբատը մի այգի է նվիրել Սպիտակավոր Աստվածածնի վանքին. «Կամաւն այ. ես Սմբատ, որդի Լիպարիտի միաբանեցա աւագ անապատիս սբ. Կարապետիս եւ Սպիտակաւոր Աստուածնիս եւ տվի զվախթանկենց այգին իւր ամէն հատաւմն զծառ և տունկ, որ հանապազ զմեղ ի պատարագն յիշեն... թվ. :ՉՁԸ: (1339)»[60]։

1348 թ. Սմբատի տիրույթները կառավարում էր նրա որդի Պենան, որը նույն թվականին Թանատի վանքի ս. Ստեփանոս եկեղեցու իր մի արձանագրությունում գրել է. «Կամաւ ամենակալին այ. ես Պէնա, որդի Սմբատա, թոռն Լիպարտի, տեր Փանծաթաղին եւ ամուսին իմ Սուսա միաբանեցաք սբ. Ստեփանոսիս եւ տուաք ի մեր հալալ հայրէնեաց որ ի Փանձաթաղին զՄազմանենց եւ զԱւանշենց էգին մեր հոգոյս բաժինն... :ՉՂէ: (1348)»[61]։ XIV դ. առաջին կեսին Օրբելյան իշխաններից բավականին ազդեցիկ դիրք ուներ Լիպարիտի մյուս որդին՝ Ջեսար Օրբելյանը։ Վերջինիս վերաբերյալ առաջին տեղեկությունը հանդիպում ենք 1310 թ. մի ձեռագրի հիշատակարանում, ուր նա հիշվում է Հովհաննես արքեպիսկոպոսի, Բուրթելի և Բուղդայի հետ[62]։ Ապա Ջեսարը հիշատակվում է Գլաձորի մի խաչքարի 1311 թ. արձանագրությունում՝ որպես տեղի իշխան. «:ՉԿ: (1311) իշխանութիւն. պարոն Ջեսարին. կամաւն այ. ամենակալին ես Վարդալահ կանկնեցի զխաչս յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց»[63]։ Ջեսարի մասին Ղ. Ալիշանը գրում է, որ նա Սմբատ իշխանի

53 «Դիվան», III, էջ 232։
54 «ԺԴ», էջ 100։
55 Նույն տեղում, էջ 166։
56 Նույն տեղում, էջ 231։
57 Նույն տեղում, էջ 231։
58 «Դիվան», III, էջ 108։
59 Նույն տեղում, էջ 55։
60 Նույն տեղում, էջ 98։
61 Նույն տեղում, էջ 81։
62 «ԺԴ», էջ 66—67։
63 «Դիվան», III, էջ 102։

որդին էր[64] Սակայն Սելիմի քարավանատան դահլիճի արևելյան պատի արձանագրության բովանդակությունը ոչ միայն որոշում է Զեսարի ինքնությունը, այլև նրանում հիշատակվում են նրա եղբայրները. «Ցանուն ամենակարող հզաւրին այ. ի թվ. :ՉՁԱ: (1332), յաշխարհակալութե. Բուսաիդ ղանին, ես Զեսար, որդի իշխանաց իշխանին Լիպարտի եւ մաւրն Անային, թոռն Իվանէի, եղբարց իմ առիւծագեղ իշխանացն Բիրթելին եւ Սմբատա եւ Էլիկումին, յազգէ Աւրպէլէնց, եւ կենակից իմ Խորիշահ, դուստր իշխանին Վարդան(ն)ա եւ Դոփին քր...րեն, յազգէս Սենիքարիմանց ի հալալ արդեանց մերոց շինեցաք դհոգետունս ի փրկութի. հոգոց մեր եւ ծնողաց եւ եղբարց մեր ի քս ննջեցելոց. եւ կենաց եղբարց իմոց եւ որդոց Սարքսի եւ Հովանիսի քահանայի, Քրդին եւ Վարդին... ի թվիս :ՉՁԱ: (1332)»[65]. Արձանագրության մեջ հիշվում են Զեսարի երեք եղբայրները միայն (Հովհաննես մետրոպոլիտը նույնպես Զեսարի եղբայրն էր)։ Զեսարի եղբայրներից Սմբատի մասին վերը խոսվեց, իսկ Բուրթելի և Էլիկումի մասին աղբյուրներում հանդիպում ենք միայն կցկտուր տեղեկություններ։ Զեսար Օրբելյանը վերջին անգամ հիշատակվում է Հորս դյուղի մի խաչքարի 1349 թ. արձանագրությունում. «Թվ. :ՉՂԸ: (1349) իշխանութբ, պարոն Զէսարին. ես Տիրի կանկնեցի ղխաչս ի փրկութի հոգոյ իմոյ»[66]։ Զեսարի ժառանգների վերաբերյալ աղբյուրներում հանդիպում ենք ժլատ տեղեկություններ։ Նրա որդիներից Իվանեն մահացել է պատանի հասակում և թաղվել Նորավանքի բակում։ Ահա նրա տապանագիրը.

«Կայ հանգուցեալ յայս տապանի
Զքնաղ մանուկ զարմանալի,
Որ Իւանէ անուն կոչի.
Եղջիւր ծագեալ Աւրբելեցի,
Որդի Զեսար մեծ իշխանի»[67]։

1349 թ. Երերան վանքում ընդօրինակված ավետարանի հիշատակարանը արժեքավոր տեղեկություններ է պարունակում Վայոց ձորի մի մասում իշխող Շահուռեցիների իշխանական տան և Օրբելյանների հետ նրանց հարաբերությունների մասին[68]։ Հիշատակարան ստացող Թուղթանա իշխանուհին հայտնում է, որ ինքը դուստրն է Որոտանի տիրոջ՝ Իվանե իշխանի, և հարս է եկել Շահուռեցիների տոհմ։ Նա Վահրամ իշխանի որդու՝ Ամատայի, կինն էր։ Ամատա իշխանը եղել է Օրբելյանների սպարապետը։ Հիշատակարանում տեղեկություններ են հաղորդվում Թուղթանայի եղբայրների՝ քաջ քարտուղար և երջանիկ ռաբունապետ Հովհաննես վարդապետի, Հասանի ու Զաքարիայի մասին[69]։ Վահրամը զինվորական ծառայության մեջ էր Տարսայիճ Օրբելյանի մոտ և, հավանաբար, վարել է նրա զորքի սպարապետության պաշտոնը։ Նրա կինը՝ Գոնցան, իրեն համարում է «յազգէ Տարսաիճեանց»[70]։ Սրանք ունեցել են երեք որդի՝ Ուքան, Հասան և Ամատա։ Իր ծնողների, ամուսնու, եղբայրների և դստեր՝ Նաթելի, հիշատակին Թուղթանան գնել է հիշյալ ավետարանը և նվիրել Երերանի վանքին։ Հիշատակարանից իմանում ենք, որ Ամատա իշխանը արու զավակ չի ունեցել և Բուրթելն ու Վախախը իրենց թոռանը՝ Կուկային (Բեշքենի որդուն) ամուսնացրել են Նաթելի հետ և նրա տնօրինությանը հանձնել Ամատա իշխանի կալվածքները[71]։

64 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 99։
65 «Դիվան», III, էջ 177—178։
66 Նույն տեղում, էջ 166։
67 Նույն տեղում, էջ 233։
68 «ԺԴ», էջ 375—376։
69 Նույն տեղում։
70 «Դիվան», III, էջ 56։
71 «ԺԴ», էջ 375—376

Ինչպես արդեն նշվեց, Լանկ-Թամուրի դեպի Սյունիք կատարած արշավանքից առաջ Իվանեն մահացել էր։ Նրա մահից հետո (թվականը հայտնի չէ) Սյունիքի դահերեց իշխաններն էին որդիները՝ Բուրթելը և Սմբատը[72]։ Ուստի համաձայն չենք Գ. Հովսեփյանի այն կարծիքին, թե Թեշքենից հետո Օրբելյանների ֆեոդալական տունը կառավարում էին Զեսարի ժառանգները[73]։ Բուրթելից և Սմբատից դատ, Իվանեն ունեցել է երկու արու զավակ՝ Ստեփանոս և Գորգուն։ Ստեփանոսը հետագայում դարձել է Սյունյաց եպիսկոպոս։ Ղ. Ալիշանը այս Ստեփանոսին Սյունյաց եպիսկոպոս է հիշատակում XV դ. առաջին կեսին[74]։ Սակայն փաստերի քննությունը մեզ բերում է այն հետևության, որ Ստեփանոսը Սյունյաց եպիսկոպոս էր XIV դ. երկրորդ կեսին։ Ստեփանոսի մասին առաջին տեղեկությունը հաղորդում է Մատենադարանի մի ձեռագիրը, որի 373-րդ հիշատակարանը գրել է ինքը՝ Ստեփանոսը. «Ես տէր Ստեփաննոս մականուն Սուլթանշահ, թոռն Բուրթելին որդի Նանիկին եղբարն Բշքինի պարոնի՝ ի Քրիստոս է հանգուցեալ։ Մեք վկայ եմք այս սուրբ Աւետարանիս Վահրամայ և իւր եղբայր, իւրեանց հալալ արդեմք գնեցին զայս սուրբ Աւետարանս...»[75]։ Գ. Գրիգորյանն այս Ստեփանոս-Սուլթանշահին կոչում է Ստեփանոս Իվանե մականունով[76]։ Այս Ավետարանի 374 էջում կա ոմն Գրիգոր քահանայի հիշատակությունն այն մասին, որ ինքը 1366 թ. իր հալալ արդյունքով գնել է Ավետարանը՝ «յիշատակ ինձ և ծնողաց իմոց եւ եղբարց»։ Ինչպես ապացուցել է Լ. Խաչիկյանը, Ստեփանոս Սուլթանշահի հիշատակարանը Գրիգոր քահանայի հիշատակարանի անմիջական շարունակությունն է[77]։ Հետևապես, Ստեփանոս Սուլթանշահի հիշատակարանը գրված է 1366 թ. կամ դրանից քիչ հետո։ Այս Ստեփանոսը նույնացվել է «Տաղ տէր Ստեփանոսին Սիւնեաց եպիսկոպոսին» պոեմի հերոսի հետ[78]։ Պոեմի բովանդակությունից իմանում ենք, որ Ստեփանոսը պատանի հասակից մինչև հոգևոր կոչում ընդունելը Թավրիզում եղել է զինվորական ծառայության մեջ և աչքի է ընկել իր քաջությամբ։ Նա մեզ անհայտ պատճառներով սպանել է իր խորթ մորը՝ Էլխանլուին և վերջինիս ազգականների պահանջով հայրը ստիպված է եղել գլխատել տալ Ստեփանոսին[79]։ Ստեփանոսի մահը, հավանաբար, տեղի է ունեցել XV դ. սկզբներին։ Մեր կարծիքով այս ժամանակաշրջանում է ստեղծվել վերոհիշյալ պոեմը։ Այստեղից էլ չենք կարող համաձայնվել Ա. Մնացականյանի այն կարծիքին, թե քննվող պոեմը XIII դ. երկրորդ կեսի կամ առնվազն XIV դ. սկզբների արդյունք է[80]։

Գորգունի մասին, որը Իվանեի չորրորդ զավակն էր, մեզ ավելի քիչ բան է հայտնի։ Սամվել Անեցու ժամանակագրության շարունակողը Գորգունի մասին գրել է. «Ի Պլէ (1386) ամին թուրքն էառ զբերդն Որոտան՝ և մեծ վարդապետն Կախիկ գնաց փախստական ի Մարայ՝ և պարոն Գօրգունէն դարդամահ եղեւ»[81]։ Ժամանակագիրը, հավանաբար, նկատի ունի Թոխթամիշի արշավանքը, երբ սա Թավրիզից մտավ Նախճավան և Սյունիք ու այնպիսի ավերածություններ գործեց Սյունիքում, որ իշխան Գորգունը վշտահար եղավ։ Սրա որդին էր Տարսայիճ իշխանը, որը XV դ. սկզբին իշխում էր Եղեգիսում։

---

72 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 96։

73 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., մասն առաջին, էջ 250։

74 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 218։

75 Մատենադարան, ձեռ. № 9450, էջ 373։

76 Գ. Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., Օրբելյանների տոհմածառը (260 էջ ներդիր)։

77 Լևոն Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 179—180։

78 Ասատուր Մնացականյան, Միջնադարյան հայրենասիրական մի նորահայտ պոեմ («Բանբեր Մատենադարանի», № 8, Երևան, 1967, էջ 291—317)։

79 Նույն տեղում։

80 Նույն տեղում, էջ 300։

81 «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 170։

Տարսայիճը հիշատակվում է այն իշխանների թվում, որոնք Միրզա-Օմարի կողմից բռնությամբ կրոնափոխ եղան. սակայն հետագայում վերադարձան քրիստոնեական հավատին։ Տարսայիճի մասին Գրիգոր Ախալցխացի գրիչը Հերմոնի վանքում 1415 թ. գրել է, որ նա զրկվել էր իր կալվածքներից. նվաճողները խլել էին նրա ողջ գյուղերն ու ագարակները, իսկ «նա փախեալ և թագուցեալ էր ի ծերպս վիմաց և ի մայրիս»[82]։ Սա Տարսայիճի մասին վերջին տեղեկությունն է։ 1385 և 1387 թթ. Սյունիք ներխուժած Թոխթամիշի և Լանկ-Թամուրի հրոսակախմբերը բարբարոսական ավերածություններ են թարկեցին տեղի շեներն ու ավանները։ Այդ ներխուժումները ծանր հարված հասցրին Օրբելյան ֆեոդալական տանը։ Հակոբ դրիչը Թոխթամիշի արշավանքի մասին գրում է. «Եւ մինչդեռ անճառ ցնծութեամբ և բերկրալից ուրախությամբ լեցեալ կայք, բարունին 460 աշակերտօքի, ի բնիկ գաւառն իւր՝ յերկիրն Որոտան, կարդալով և գրելով զսուրբ մատեանս, մեղքն իմ ծովացեալ եհան զգունդրս անօրինացն ի վերայ քրիստոնէից, մանաւանդ ի վերայ տանն Բուրդելի։ Որ եկին և առին զբերդն Որոտան, և հայրենաղուրկ արարին զպարոն Սմբատն, որդի Նանիկին»[83]։ Սա նաև առաջին տեղեկությունն է Իվանեի որդու՝ Սմբատի, մասին։ Տաթևցի գրիչ Սիմոնը 1400 թ. գրած հիշատակարանում, նկարագրելով հայերի համար ստեղծված ծանր վիճակը, հայտնում է, որ հիշատակարանը գրել է Սմբատի և Բուրթելի իշխանության ժամանակ[84]։ Իսկ 1401 թ. Տաթևում գրված հիշատակարանի գրիչը հայտնում է, որ իր մատյանը գրել է Սյունյաց նահանգում, պարոն Սմբատի և նրա եղբոր՝ պարոն Բուրթելի, Իվանեի որդիների և մեծ Բուրթելի թոռների իշխանության ժամանակ[85]։ Թ. Մեծոփեցու վկայությամբ Լանկ-Թամուրի երկրորդ արշավանքից (1394—1396) հետո Իրանի և Անդրկովկասի կառավարիչ նշանակված Օմարը հինգ հայ իշխանների բռնությամբ մահմեդական է դարձնում, որոնց թվում Օրբելյան երեք իշխանների՝ Իվանեի որդիներ Բուրթելին ու Սմբատին, Գորգունի որդի, Եղեգիսի տեր Տարսայիճին[86]։ Թերևս այս անցքն է նկատի ունեցել Առաքել Սյունեցին, երբ 1403 թ. Օրբելյան իշխանների մասին գրել է.

«Այլ և իշխանքն մեծ՝ Սրմբատ,
ԶԲիւրթէլ՝ եղբայրն իւր հարազատ,
Զաւակք նոցա ծնընդեամ արատ,
Յազգէս Հայոց լինել անհատ»[87]։

Բռնությամբ կրոնափոխված հայ իշխանները, հավանաբար, մեծ փրկագին տալով, վերադարձել են հայրենիք։ 1406 թ. Սմբատը և Բուրթելն արդեն Սյունիքում էին։ Այս թվականին Տաթևում գրած իր հիշատակարանում գրիչ Գրիգորը տեղի իշխաններ է հիշատակում Սմբատին և Բուրթելին. «Իշխանութեամբ տեղիս բարեպաշտ իշխանացն Սմբատի և Բուրթելի, ի թվականիս Հայոց ՊԾԵ (1406)»[88]։ Ղ. Ալիշանը գտնում է, որ Բուրթելը մահացել է 1401 թ.[89]։ Սկզբնաղբյուրների վկայությամբ, 1407 թ. երկրում տարածված համաճարակից մահացել են Բուրթելն ու իր որդիները, ինչպես նաև Սմբատի

82 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (այսուհետև՝ «ԺԵ»), կազմեց Լ. Խաչիկյանը, մասն Ա, Երևան, 1955, էջ 656։

83 «ԺԴ», էջ 560։

84 Նույն տեղում, էջ 632։

85 «ԺԵ», մասն Ա, էջ 4։

86 «Թովմա վարդապետի Մեծոփեցւոյ Պատմութիւն Լանկ Թամուրայ և յաշխարհաց իւրոց», Փարիզ, 1860, էջ 67—68։

87 «ԺԵ», մասն Ա, էջ 35։

88 Նույն տեղում, էջ 57։

89 Ալիշան, Նշվ. աշխ., էջ 96։

որդին[90]։ Այս անցքերին անդրադարձել է նաև գրիչ Թուման, որը 1407 թ. Տաթեի վանքում գրել է. «յոյժ տրտմեցաք, զի իշխան մեր Բիւրթէլ կոչեցեալ՝ ի Քրիստոս փոխեալ, մանկամ(բ)քն ծաղկեալ»[91]։

1407 թ. Աբու-Բաքրի դեմ Ղարա-Յուսուֆի և Ջելաիրյան Ահմադի մղած պատերազմին մասնակցում էր նաև Սմբատ Օրբելյանն իր հեծյալ գնդով[92]։ Լանկ-Թամուրի թոռ Աբու-Բաքրին հաղթելուց հետո, երբ Ղարա-Յուսուֆը զբաղված էր Աղ-Կոյունլուների առաջնորդ Ղարա-Օսմանի դեմ պատերազմելով, օգտվելով հարմար առիթից, Ջելաիրյան Ահմադը 1410 թ. գրավեց Թավրիզը։ Սմբատ Օրբելյանը օժանդակեց Ահմադին, որի փոխարեն ստացավ Անգեղակոթ գյուղը[93]։ Տեղեկանալով կատարվածի մասին, Ղարա-Յուսուֆը հաշտություն է կնքում Ղարա-Օսմանի հետ և շտապում Թավրիզ՝ իր դավաճան դաշնակցին պատժելու համար։ Նա գրավում է Թավրիզը և 1410 թ. մահապատժի ենթարկում Ջելաիրյան Ահմադին։ Յուսուֆն անպատիժ չթողեց նաև Սմբատ Օրբելյանին՝ գրավեց նրա նստոց Որոտան բերդը. «էառ զՈրոտան ի Սմբատէ», գրում է Թ. Մեծոփեցին[94]։ Սմբատ Օրբելյանը Յուսուֆի հալածանքներից ազատվելու համար փախավ Վրաստան, ուր և կնքեց իր մահկանացուն։ Նրա մասին վերջին տեղեկությունը հանդիպում է Ախալցխա գյուղաքաղաքում 1412 թ. գրված մի հիշատակարանում[95]։ Հովհաննես գրիչը 1415 թ. Տաթևում գրած հիշատակարանում տեղի իշխաններ է հիշատակում Սմբատի որդիներին՝ Բեշքենին և Շահին[96]։ Մաթևոս Մոնոզոն գրիչը 1417 թ. Գանձասարի վանքում գրած իր հիշատակարանում անդրադառնալով այս անցքերին, արձանագրել է. «Քանզի այն, որ կայր մնացեալ շառաւիղն տանն Բիւրթելեանց՝ գնաց փախըստական ի Տունն Վրաց, որոյ անուն Սմբատ կոչիր, և անդ՝ ի յօտարութեանն վախճանեցաւ։ Եւ մնացեալ Բ. որդիք իւր եկին ի հայրենիս իւրեանց, և ոչ են տեարք իշխանութեանն իւրեանց, այլ ընդ ձեռամբ անօրինաց»[97]։

Սմբատն ունեցել է չորս որդի՝ Բեշքեն, Իվանե-Ստեփանոս և Շահ, իսկ նրա չորրորդ որդին, որի անունը սկզբնաղբյուրներում չի պահպանվել, ինչպես նշվեց, 1407 թ. համաճարակից մահացել է իր հորեղբոր և նրա զավակների հետ։

Սմբատի ավագ որդի Բեշքենի մասին առաջին տեղեկությունը հանդիպում է 1406 թ. Տաթևում գրված մի հիշատակարանում, ուր նա հիշատակված է որպես տեղի իշխան[98]։ Բեշքենը և նրա եղբայր Շահը հիշատակված են նաև 1451 թ. Տաթևում գրված հիշատակարանում[99]։ Իսկ 1422 թ. Տաթևում շարադրված մեկ այլ հիշատակարանում Բեշքենը հիշատակվում է որպես տեղի իշխան։ Այդ նույն հիշատակարանից իմանում ենք, որ Սմբատի մյուս որդին՝ Ստեփանոսը, որը Սյունյաց նահանգի հոգևոր առաջնորդն էր, գնացել է Վրաստան՝ մոր մոտ, ուր և կնքել է իր մահկանացուն[100]։ Որպես Սյունյաց իշխան, Բեշքենը հիշատակում է նաև 1428 թ. Անգեղակոթ գյուղում գրիչ Մովսես Անգեղակոթցու գրած հիշատակարանում. «Գրեցաւ... ի ղանութիւն Սքանդար միրզին, և յիշխանութիւնն Բէշկ(են)ին»[101]։ 1429 թ. մի հիշատա-

90 «ԺԵ», մասն Ա, էջ 80։
91 Նույն տեղում, էջ 75։
92 Թ. Մեծոփեցի, էջ 72—73։
93 Նույն տեղում, էջ 74։
94 Նույն տեղում։
95 «ԺԵ», մասն Ա, էջ 133։
96 Նույն տեղում, էջ 653։
97 Նույն տեղում, էջ 194։
98 Նույն տեղում, էջ 58։
99 Նույն տեղում։
100 Նույն տեղում, էջ 292։
101 Նույն տեղում, էջ 382։

կարանից իմանում ենք, որ Բեշքենը մի Ավետարան է նվիրել Սյունեվանքին[102]։ Բեշքենի որդի Ռուստամը փորձել է Իսքանդարի մոտ ծառայության մտնելու ճանապարհով վերականգնել Օրբելյանների իրավունքներն իրենց նախկին տիրույթների վրա և հասել է որոշ հաջողությունների։ Սակայն Օրբելյանների այս հաջողությունը ժամանակավոր եղավ։ Երբ 1434—1435 թթ. Շահռուխը երրորդ անգամ արշավեց Իսքանդարի դեմ, վերջինս թողեց Թավրիզը, իսկ Շահռուխն իշխանությունը հանձնեց Ջահանշահին՝ Իսքանդարի եղբորը։ Իսքանդարը ապավինելով մի ամրոցից մյուսին, փորձում էր ետ նվաճել կորցրած իշխանությունը։ Ի վերջո, երրորդ բերդում 1437 թ. նա մորթազերծ արվեց։ Բնական է, որ հալածանքի պետք է ենթարկվեին նաև Իսքանդարի վասալները, այդ թվում Ռուստամ Օրբելյանը և իր հայրը՝ Բեշքենը։ Թ. Մեծոփեցու վկայությամբ, Շահռուխի հալածանքներից խուսափելու նպատակով, Բեշքենը և իր որդին 6000 հոգով գաղթում են Լոռի[103]։ Բեշքենը վրաց Ալեքսանդր թագավորից ստանում է հայկական Լոռի բերդը։ 1437 թ. Շմավոն վարդապետի գրած հիշատակարանում Բեշքենը և Ռուստամը հիշվում են որպես տեղի իշխաններ. «Իշխանութեան տեղոյս իշխանաց իշխանին պարոն Բէշքենին՝ շառաւիղին՝ Օրբելեանց, և որդոյ փիրոյ պարոն Ռըստամին, որ և է ինձ հոգևոր որդի, զոր տէր աստուած պահեսցէ անսասան կենաւք զպարոն Բէշքենն ծաղկեալ զաւակաւն իւր մինչ ի խորին ծերութիւնն»[104]։ Սակայն վրաց թագավորը 1438 թ. դեղամահ է անել տալիս իր աներոջը՝ Բեշքենին[105]։ Հավանաբար, Բեշքենին թունավորելու գործում դեր է խաղացել նաև Ջահանշահի վրեժխնդրության հարցը։ Վրաց թագավորը թերևս երկյուղում էր, որ Ջահանշահը իրենից վրեժխնդիր կլինի Բեշքենին ապաստան տալու համար։ Բեշքենի դավադրական սպանության ժամանակ նրա Շահ անունով եղբայրն ապրում էր Վրաստանում. «Եւ անարի գտեալ (Շահը—Գ. Կ.) և ոչ ի խնդիր ելեալ հայրենի գավառին»[106]։ Թ. Մեծոփեցին մեղադրում է Շահին, որը վախեցավ պաշտպանել հայրենի կալվածքները և վրեժխնդիր լինել եղբոր համար։

Բեշքենի Ռուստամ որդին 1429—1436 թթ. Իսքանդարի արքունիքում վարում էր մեծ վեզիրի և արքունի խորհրդականի պաշտոն։ Այս ընթացքում Ռուստամ Օրբելյանը ձեռք էր բերել մեծ հռչակ։ 1431 թ. նա էջմիածինի վանքին է վաճառել յոթ գյուղ։ Այդ առթիվ գրված կալվածագրում Ռուստամը հիշվում է հետևյալ տիտղոսներով. «Վեհանձնյա ամիր և տեր, մեծափառ, ազնվաշուք, բարձրաստիճան, բարձրագույն, ծառայության արժանացած մեծահարգ վեզիր, նորին կայսերական մեծության՝ սուլթանի մերձավորներից, ամենազոր արքայական պետության սիրելի, մեծագույն սուլթանների խորհրդական, արքաներից ամենից իմաստունի վստահելին, որի անձը վեր է ամեն տեսակ նկարագրությունից և գովասանքներից, հավիտենականության տեր աստծու ողորմածությամբ իշխանության և կրոնի քաջահաղթ ամիր Ռուստամը, որդի ամիր Բեշքենի, որդի ամիր Սմբատի»[107]։ Ռուստամն իր ծառայության դիմաց կալվածքներ է ստանում ինչպես Սյունիքում, այնպես էլ Արարատյան երկրի Արագածոտն, Կոտայք և այլ գավառներում[108]։ Տեսանք, որ Ռուստամը Ջահանշահի հալածանքներից խուսափելու նպատակով ապաստան էր գտել Լոռիում՝ հոր մոտ։ Սակայն XV դ. կեսերից նա նորից է երևում Սյունիքում։

---

102 Նույն տեղում, էջ 392։

103 Թ. Մեծոփեցի, էջ 117—119։

104 «Ժն», մասն Ա, էջ 468։

105 Թ. Մեծոփեցի, էջ 118։

106 Նույն տեղում, էջ 119։

107 «Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը», պրակ I, կազմեց Հ. Փափազյան, Երևան, 1968, էջ 67։

108 Հ. Փափազյան, Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1955, № 6, էջ 89)։

1450 թ. Ռուստամը Տաթևի վանահայր Շմավոն Անգեղակոթցուն է վաճառել Սվարանց, Տաշու, Աղանց և Տանձատափ գյուղերից կալվածքներ[109]։ Սա Ռուստամե մասին վերջին տեղեկությունն է. թե հետո ինչպես է տնօրինվել արքունի «մեծ վեղիրի» ճակատագիրը, մնում է անհայտ։ Սակայն հայտնի է, որ նա 1450 թ. հիշատակվել է որպես սոսկ ամիրզադա։ XV դ. երկրորդ կեսից մեզ հասած ժլատ տեղեկություններն առայժմ հնարավորություն չեն ընձեռում շարադրելու Օրբելյան իշխանների հետագա պատմությունը, սակայն նրանք գոյատևել են Սյունիքում և Վայոց ձորում։ 1471 թ. հիշատակվում է Ստեփանոսի որդի Սմպատը։ Նա 1471 թ. ստացած Ավետարանի հիշատակարանում գրում է. «Ես պարոն Սմպատս առի զկենսաբեր Աւետարանս յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ զհայրն իմ Ստեփանոս, մայրն իմ Մարգարիտ-խաթուն, զպապն իմ Սմբատ, զմեծ պապն Իվանիկ... ի թվ. :ՋԻ: (1471)»[110]։ Մի պարոն Սմբատի մասին էլ հիշատակվում է Հերհերի մոտ գտնվող Գյոյաբաս գյուղի ավերակների խաչքարի արձանագրությունում. «Թվ. :ՋՃԼԸ: (1489) կամաւն այ ես խաչատուր էրէց էրկիլ կանգնեցի զխաչս հոգոյ փրկութե. պարոն Սմբատին, իւր թոռին»[111]։ Այս Սմբատը XV դ. առաջին քառորդին Եղեգիսում իշխող Տարսայիճի որդին է։ Հավանաբար Սմբատին հաջողվել էր մուսուլման նվաճողներից ետ ստանալ հոր կալվածքները։ Որ Սմբատը իրոք Տարսայիճի որդին է, ավելի որոշակի ասվում է 1495 թ. Եղեգիսում գրված մի հիշատակարանում, ուր տեղեկություն է հաղորդվում նաև Սմբատի որդու՝ Եղիշե արքեպիսկոպոսի մասին. «...Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս Հայոց ՋԽԴ (1495), ի կաթողիկոսութեանն տեառն Սարգսի՝ յաթոռս սուրբ էջմիածնի. եւ վերադիտող այսմ նահանգի պարոն-տէր Եղիշա արքեպիսկոպոսի՝ որդի իշխանաց իշխանի պարոն Սմպա(տայ), որդոյ մեծին Տարսաիճի»[112]։ Եղիշե արքեպիսկոպոսի վերաբերյալ առաջին տեղեկությունը թվագրվում է 1475-ով։ Իր հոր՝ Սմբատի, մահից հետո Եղիշե արքեպիսկոպոսը Եղեգիսում իշխող Օրբելյան ճյուղի հոգևոր և աշխարհիկ առաջնորդն էր և հանդես էր գալիս «պարոն-տեր» տիտղոսով։ Այսպիսով, մոնղոլների և ապա թուրք-թաթարական քոչվոր ցեղերի վայրագ տիրապետության ու հալածանքների հետևանքով, ինչպես հայկական այլ ավատական տներ, այնպես էլ Օրբելյաններն աստիճանաբար թուլացան և XV դ. վերջերին հանդես էին գալիս սոսկ որպես պարոն-տերեր։

КНЯЖЕСКИЙ ДОМ ОРБЕЛЯНОВ В XIV—XV вв.

ГЕГАМ КИРАКОСЯН

Резюме

В XIV—XV вв. феодальным домом Орбелянов управляли князь Буртел и его наследники. Буртел правил с 1300/1302 по 1348 гг. Он пользовался большим авторитетом как среди армянских князей, так и монгольских правителей. У Буртела было два сына—Бешкен и Иванэ, первые сведения о которых в источниках встречаются с 1321 г. Бешкен прожил до 1349 г., а Иванэ—приблизительно до 1367г.

---

109 «Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը», պրակ I, էջ 78—80։

110 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, կազմեց Լ. Խաչիկյանը, Երևան, 1958, էջ 317։

111 «Դիվան», III, էջ 47։

112 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, կազմեց Լ. Խաչիկյանը, Երևան, 1967, էջ 213։

Иванэ имел четырех сыновей—Буртела, Смбата, Степаноса и Горгуна. Степанос достиг епископского сана и был убит молодым, Горгун же умер в 1386 г.

Нашествие Ленг-Тимура на Сюник нанесло тяжелый урон феодальному дому Орбелянов, однако Смбат и Буртел в начале XV в., смогли восстановить свои права. Буртел умер от эпидемии в 1407 г., а Смбат убежал от преследований Кара-Юсуфа в Грузию, где и умер в 1411 г. Смбат также имел четырех сыновей—Бешкена, Иванэ-Степаноса, Шаха. Имя же одного из них, умершего в детском возрасте, неизвестно. Бешкен и его сын Рустам, поступив на службу к туркменскому правителю Искандеру, восстановили свои права в Сюнике. Однако в 1437 г. они бежали в Грузию, спасаясь от преследований Дахан-шаха.

Потомки князей Орбелянов продолжали править в Сюнике и во второй половине XV в., однако прежними правами и авторитетом они уже не пользовались.